

Ո՞ր քաղաքում է առաջին անգամ ի հայտ եկել մետրոն

1863թ. Մեծ Բրիտանիայի մայրաքաղաքում տեղի ունեցավ հիշարժան իրադարձություն՝ բացվեց աշխարհում առաջին մետրոյի գիծը: Նրա ստեղծման միտքը հղացել է 1843թ. անգլիացի ինժեներ Պրիստոնը: Սակայն այդ մտահղացումը նա չկարողացավ շուտ իրականացնել: Աշխատանքները տարվում էին բաց տարածքներում կամ ոչ շատ մեծ խորություններում: Սկզբում ռելսերի վրայով երթևեկում էին շոգեքարշներ, և միայն 1906թ.-ից սկսեցին շահագործվել էլեկտրագնացքները: 1912թ.-ին ամբողջ մետրոպոլիտենը «թարմացվեց»: Հետաքրքրական է այն հանգամանքը, որ 19-րդ դարում Լոնդոնից հետո մետրո կառուցվեց ոչ թե մեծ ու խիտ բնակեցված մայրաքաղաքներում, այլ այդ ժամանակներում նահանգ հանդիսացող Աթենքում, Գլազգոյում ու Բուդապեշտում:

Ներկայումս մետրոյի լոնդոնյան գետնուղին խիստ փոփոխությունների է ենթարկվել, այժմ այն ունի ավելի քան 300 կայարան և բաժանված է քաղաքի կենտրոնը ծայրամասերին միացնող 6 հատվածների:

Ի դեպ...



Հայաստանում մետրոն սկսել է կառուցվել 1972թ.-ից և շահագործման է հանձնվել 1981թ.-ի մարտի 7-ից: Ի սկզբանե մետրոն նախագծվել է որպես ստորգետնյա տրամվայի երթուղի, ապա վերափոխվել է մետրոյի: Երևանի մետրոյի ուղիների ընդհանուր երկարությունը 12,1 կմ է, գործում է 10 կայարան: Կայարաններից երեքը՝ Սասունցի Դավիթ, Գործարանային և Չարբախ կայարանները վերգետնյա են, մնացած յոթը՝ ստորգետնյա:

Երևանի մետրոպոլիտենի կայարանները

Կայարանի անվանումը	Մուտքը/Ելքը	Շահագործման հանձնելու ամսաթիվը
Բարեկամություն	Կինյան խաչմերուկ	1981թ. Մարտի 7
Մարշալ Բաղրամյան	Բաղրամյան փողոց, Սիրահարների այգի	1981թ. Մարտի 7
Երիտասարդական կայարան	Իսահակյան և Աբովյան փողոցների խաչմերուկ	1981թ. Մարտի 7
Հանրապետության Հրապարակ	Կառավարության 3-րդ մասնաշենք	1981թ. Դեկտեմբերի 26
Չորավար Անդրանիկ	Տիգրան Մեծ պողոտա, Խորենացու և Ագաթանգեղոսի փողոցներ	1989թ. Դեկտեմբերի 2
Սասունցի Դավիթ	Երկաթուղային կայարան	1981թ. Մարտի 7
Գործարանային	1-ին մաս	1983թ. Հունիսի 11
Շենգավիթ	Շենգավիթ	1985թ. Դեկտեմբերի 26
Գարեգին Նժդեհ Հրապարակ	Գարեգին Նժդեհի հրապարակ	1987թ. Հունվարի 1
Չարբախ	Չարբախ	1996թ. Դեկտեմբերի 26